ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

I

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԳՏԱԾՈՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-45

Արմինե Գաբրիելյան, *պ. գ. թ.*
ՀԱԻ

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԴՐՈՇՄԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԸ*

Արցախի Տիգրանակերտի անտիկ ժամանակաշրջանի (մ.թ.ա. 1-ին – մ.թ. 3-րդ դդ.) նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության առումով մեծ աղբյուրագիտական նշանակություն ունի վերոհիշյալ ժամանակաշրջանի խեցեղենը, որը մեկուկես տասնամյակ տևած պեղումների ամենաառատ հնագիտական նյութն է:

Այն, բացի ձևերի բազմազանությունից, ունի նաև մեկ այլ առանձնահատկություն՝ ներկայանում է շքեղ գունազարդ, սև և մոխրագույն, փայլեցված, դրոշմազարդ և փորագիր զարդերով հարդարված տեսակներով: Այս շարքում, թեև փոքրաթիվ, բայց յուրահատուկ խումբ են կազմում դրոշմազարդման եղանակով հարդարված անոթները, որոնք կարող են լույս սփռել Տիգրանակերտի մշակութային նորամուծությունների, առևտրա-մշակութային կապերի և տարածաշրջանում նրա խաղացած մշակութային դերակատարման վրա:

Հիմնաբառեր՝ Արցախի Տիգրանակերտ, անտիկ շրջան, դրոշմազարդ խեցեղեն, ողկույզ, գինեգործություն, կենաց ծառ:

Ողկուզակիր անոթներ

Արցախի Տիգրանակերտի միջնաբերդի, հյուսիսային պարսպապատի և անտիկ թաղամասերի պեղումներով տարբեր տարիներին հայտնաբերված դրոշմազարդ խեցեղենի բացառիկ օրինակներ են ներքուստ ողկուզակիր գոտիներով հարդարված գավաթների, փիալա-ըմպանակի և թասի բեկորները [աղ. 1]: Այս անոթներն անվանում ենք ողկուզակիր՝ նկատի ունենալով, որ կոնաձև, սուր գագաթով դեպի ներքև ուղղված, կլոր գնդիկներով լցված դրոշմազարդ պատկերներն ամենայն հավանականությամբ խաղողի ողկույզ են ներկայացնում:

Անոթները, որպես կանոն, ունեն սև, հայելափայլ արտաքին, խեցին կտրվածքում մոխրագույն է, համասեռ, լավ զտված և հունցված, հավասարաչափ թրծված: Թրծումն իրականացվել է գլխավորապես վերականգնողական անթթվածին թրծման եղանակով[1], որից հետո որոշ անոթների հայելափայլ մակերես ստանալու համար կաշվե, փայտե կամ քարե կոկիչներով դրանք կրկնակի մշակման են ենթարկվել[2]: Շրջանաձև (տրամագիծը՝ 5 սմ), քիչ տափակոտ

---

* Սույն հոդվածը հեղինակի՝ 2018 թ. «Aramazd» պարբերականում լույս տեսած անգլերեն հոդվածի [տե՛ս Gabrielyan 2018] լրամշակված և համալրված հայերեն տարբերակն է:

1 Պետրոգրաֆիկ անալիզներն իրականացրել է երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու, երջանկահիշատակ Ալլա Մնացականյանը 2013 թ.:

2 Սևափայլ խեցեղենի արտադրությունը, կապված լինելով բարդ տեխնոլոգիայի հետ և

նման դիորիտե կոկիչ հայտնաբերվել է անտիկ թաղամասի ուշ հելլենիստական շերտում [աղ. 2, նկ. 4]:

Տիգրանակերտում հայտնաբերված երեսունից ավելի ողկուզակիր օրինակների քննությունը պարզում է, որ անտիկ վարպետները դրոշմազարդումն իրականացրել են կոնաձև, երեքից տասնմեկ հատիկներից կազմված ողկույզներ պատկերող առնվազն ինը դրոշմիչով: Ընդ որում, որոշ դեպքերում միևնույն քանակի հատիկներից բաղկացած ողկույզները հատիկների տարբեր դասավորվածություն ունեն (օրինակ՝ վեց կամ ութ հատիկների դեպքում) [աղ. 1, նկ. 5, 7]: Վերոհիշյալ մոդիֆիկացված տարբերակների բազմազանության հետ մեկտեղ, Տիգրանակերտում դեռևս չեն հայտնաբերվել խեցեղենի դրոշմիչներ: Դրանց արտաքին տեսքի մասին կարելի է պատկերացում կազմել Արևմտյան Եվրոպայի անտիկ հուշարձաններից հայտնի օրինակներով[3]: Կիրառման համար հարմարավետությամբ պայմանավորված՝ խեցանոթների դրոշմիչներն ունեցել են երկար բռնակներ, որոնց մեկ, երբեմն էլ երկու ծայրերը փորագրազարդ են եղել [աղ. 2, նկ. 1, 2][4]: Դրոշմազարդումն իրականցվել է այն փուլում, երբ խեցանոթների կավը դեռ խոնավ և փափուկ է եղել, այսինքն՝ մինչև պատրաստի արտադրանքի լրիվ չորացումը:

Տիգրանակերտի՝ խնդրո առարկա սևափայլ անոթները ներքուստ, շրթեզրից 1,5–2,0 սմ ցած, ունեն իրարից 1,5 սմ հեռավորությամբ ձգվող փորագիր հորիզոնական գոտիներ, որոնց արանքում, անոթի ողջ շրջագծով, դրոշմված են ողկույզների ռիթմիկ կրկնվող պատկերներ: 2013 թ. անտիկ առաջին քաղաքային թաղամասի պեղումներով հայտնաբերված ամբողջացող գավաթի միակ ողկուզակիր գոտին անոթի հատակամերձ հատվածում է: Դրա և շրթեզրից 2,5 սմ ցած համակենտրոն գծի միջև առաջացած մոտ 5 սմ լայնությամբ գոտին հարդարված է ներգծված փորագրազարդ եռանկյունիներով [աղ. 1, նկ. 11]: Ընդ որում, հորիզոնական գծերի մեջ ներգծված մեկ և ավելի եռանկյունիների համաչափ կրկնությամբ ստացված զարդամոտիվը Տիգրանակերտի վարպետների կողմից սիրված և գունազարդ խեցեղենի վրա լայն կիրառում ունեցող զարդապատկերներից է:

Երբեմն միևնույն անոթի ներսում առկա են միաժամանակ երկու ողկուզակիր գոտիներ [աղ. 1, նկ. 9]: Ընդ որում, դրոշմազարդ առաջին գոտին երբեմն դրվում էր շրթեզրին շատ մոտ, ինչպես ըմպանակներից մեկի դեպքում է [աղ. 1, նկ. 4]: Ողկուզակիր երկրորդ գոտին զետեղվում էր անոթի ստորին մասում՝ ընդգծելով հատակը: Որոշ նմուշների դեպքում շուրթի երիզն էլ է ընդգծված փո-

---

առավել աշխատատար լինելով, ավելի թանկ արժեր և բարձր էր գնահատվում: Տիգրանակերտի անտիկ խեցեղեն արտադրանքում սև և մոխրագույն խեցեղենը տեսակարար կշռով ավելի սակավաթիվ է. կարմրավարդագույն (75 տոկոս) և դեղնադարչնագույն (16 տոկոս) խեցեղենի համեմատությամբ այն ընդամենը 9 տոկոս է կազմում (վիճակագրական տվյալներն՝ ըստ 2015–2018 թթ. հնագիտական հետազոտության արդյունքների):

3 Այս համատեքստում հեղինակի կողմից փորձ է արվել վերակազմելու Տիգրանակերտի ողկուզակիր դրոշմիչներից մեկը [աղ. 2, նկ. 3]:

4 Moser, Tilhard 1987, 121, fig. 49; Vernhet 1998, 23.

րագիր շատ նուրբ գոտիով (Տիգր. 2012, ԱԹ/11, 14, 19, 25 և այլն)։ Հայտնի են նաև շուրթն ակոսագծով ձևավորած մի քանի օրինակներ (Տիգր. 2014, ԱԹ/24) [աղ. 1, նկ. 8]։ Հայտնաբերված խեցանմուշների վրա ողկույզները փորագիր հորիզոնական գոտիների մեջ հիմնականում մեկ շարքով են դրոշմված, սակայն հանդիպում են օրինակներ, որոնց շուրթից ներքև գոտին հարդարված է ողկույզների շախմատաձև դասավորված երկու շարքով (Տիգր. 2011, ՄԲ/73, 2012, ԱԹ/11) [աղ. 1, նկ. 7, 10]։

Անտիկ երկրորդ քաղաքային թաղամասից 2017–2019 թթ. պեղումներով հայտնաբերված սևափայլ խեցատները տարբերվում են վերը նկարագրվածներից և լրացնում ողկուզակիրների տիգրանակերտյան խումբը։ Դրանցից մեկի վրա՝ շրթեզրից անմիջապես ցած, ձգվում է հորիզոնական երկու համակենտրոն գոտիների մեջ դրոշմված տերևների (խաղողի կամ բաղեղի) շարք, որին, ամենայն հավանականությամբ, հաջորդել է ողկույզների գոտին (Տիգր. 2017, ԱԹ/2) [աղ. 1, նկ. 6]։ Ցավոք, խեցատի վրա պահպանված է ողկույզներից միայն մեկի կեսը, որից պարզվում է, որ այն կոնաձև սուր գագաթով դեպի վեր է դրոշմված։ Մյուս՝ առայժմ եզակի օրինակը դրոշմազարդ է թե՛ ներսից, թե՛ դրսից (Տիգր. 2019, ԱԹ/69) [աղ. 1, նկ. 3]։ Այս բեկորի ներսի հարդարանքը նման է նախորդին՝ այն տարբերությամբ, որ գավաթի շուրթը զարդարված է ռիթմիկ կրկնվող փորագիր շեղ գծիկներով։ Դրսից անոթը հարդարված է համակենտրոն գոտիների մեջ ներգծված տերևների և դրանց հաջորդող ողկույզների շարքերով։

Սևափայլ ողկուզակիր անոթների ողջ հորինվածքի նրբագեղ կատարումը, սև թանձր քսուքապատումը, փայլեցումը, որը թողնում է լաքապատման տպավորություն, այս անոթներին տալիս են յուրահատուկ գեղեցկություն և հիմք՝ ենթադրելու, որ դրանք կիրառվել են հատուկ նպատակով։ Թեև ողկուզակիր անոթների մեծ մասը հայելափայլ մակերես ունի, այնուամենայնիվ առկա օրինակներում հանդիպում են նաև խամրած, անփայլ նմուշներ։ Դրանց վրա ողկույզները փոքր-ինչ անփույթ են դրոշմված, ինչի պատճառով հատիկները լավ չեն երևում։ Անտիկ առաջին թաղամասից հայտնաբերված գավաթներից մեկի մակերեսն այնքան քայքայված է, որ սև փայլեցված շերտը հեշտությամբ առանձնանում է [աղ. 1, նկ. 11]։ Ողկուզակիր մեկ այլ անոթի մակերեսի մաշվածությունը և հատակամերձ հատվածում անցքի առկայությունը հաստատում են, որ այն երկար է օգտագործվել և ընթացքում վերանորոգվել է [աղ. 1, նկ. 12]։

Նյութի քննությունը ցույց է տալիս, որ ողկույզներով դրոշմվել են բացառապես բաց անոթները, որոնք նախատեսված են եղել հեղուկ/գինի ըմպելու համար։ Խաղողի ողկույզներ կրող գավաթներն ու փիալաները վկայում են, որ Տիգրանակերտում անտիկ ժամանակաշրջանում գինեգործությունը զարգացած է եղել։ Այս եզրակացությունը հաստատում են ամրացված թաղամասի արևելյան ստորոտում 2012 թ. բացված՝ խաղողը ճզմելու բազմանկյուն հարթակ առագաստից և հորից բաղկացած ժայռափոր հնձանը[5], հուշարձանի բոլոր

[5] Պետրոսյան և այլք 2015, 88, նկ. 44։

պեղավայրերից հայտնաբերված անտիկ կարասների, գունազարդ սափորների և գավաթների հարյուրավոր բեկորները, անտիկ առաջին քաղաքային թաղամասից գտնված կապույտ ապակուց խաղողի ողկույզ պատկերող նրբագեղ կախիկը (Տիգր. 2017, ԱԹ/1), ինչպես նաև խաղողի (Vitis vinifera) կենսահանքայնացած կամ ածխացած կորիզների գտածոների հնաբուսաբանական անալիզների տվյալները, համաձայն որոնց՝ անտիկ Տիգրանակերտում մշակել են առնվազն երկու տեսակի խաղող՝ տեխնիկական և սեղանի[6]:

Այսպիսով, տիգրանակերտյան ողկուզակիր անոթները ստեղծվել են ձևի, կիրառական նշանակության, զարդապատկերի միասնական ամբողջականության մեջ:

Հայաստանյան անտիկ հուշարձաններում, բացի Տիգրանակերտից, ողկուզակիր անոթներ դեռևս չեն վավերացվել[7]: Այս փաստը, ինչպես նաև հիշյալ անոթների արդեն մատնանշված բազմազանությունը թույլ են տալիս ավելի քան հավանական համարելու, որ վերոհիշյալ սևափայլ ոզկուզակիր անոթները տիգրանակերտյան արտադրության արգասիք են: Դրա օգտին են խոսում նաև խեցատների պետրոգրաֆիկ անալիզների արդյունքները, համաձայն որոնց՝ սևափայլ անոթների հումքը տարածաշրջանից է: Ըստ Ա. Մնացականյանի, կարելի է ենթադրել, որ օգտագործված կավը բերվել է Տիգրանակերտից արևմուտք գտնվող Քարվաճառի (Լերկասար, Սատանաքար, Սևքար և այլն) հրաբխային կազմավորումների լվացումներից[8]:

Ներքուստ դրոշմակիր խեցանոթների դասական օրինակներ հայտնի են հունահռոմեական աշխարհում դեռևս մ.թ.ա. 5–4-րդ դդ. սկսած[9]: Որպես կանոն, դրոշմվում էին սևալաք բաց անոթները՝ կիլիքսները, սկիֆոսները, կանթարոսները և թասերը, սիրված և հիմնական մոտիվներն էին օվերից կազմված զարդամոտիվները, արմավազարդը, լոտոսի ծաղիկները, հազվադեպ՝ մեանդրը, ձիթապտղի ճյուղը, բաղեղի տերևներն ու պտուղները[10]: Սակայն այդ շարքում ողկուզակիր պատկերներ մեզ հայտնի չեն:

Հելլենիստական ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. 3-րդ դ. անտիկ կենտրոններում, դեռևս հանդիպում են հայելափայլ, սևալաք անոթների լավորակ նմուշներ, սակայն, սկսած մ. թ. ա. 2-րդ դ., սև լաքի որակն ընկնում է, այն վերափոխվում է շագանակագույնի կամ կանաչամոխրագույնի, իսկ մ.թ.ա.- մ.թ. սահմանագլխին աստիճանաբար դուրս մղվում կարմիր լաքի կիրառման հետևանքով[11]:

---

6 Պետրոսյան և այլք 2015, 92: Հնաբուսաբանական ուսումնասիրությունն իրականացրել է կ.գ.թ. Ռոման Հովսեփյանը:

7 Մեզ հայտնի միակ բացառությունը 2016 թ. Աղիտուից հայտնաբերված բեկորն է, որն, ըստ պեղող հնագետ, պ.գ.թ. Մկրտիչ Զարդարյանի բանավոր հաղորդման, գուցե Տիգրանակերտից է ներմուծված: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Մ. Զարդարյանին՝ այս տեղեկությունը տրամադրելու համար:

8 Ըստ Ա. Մնացականյանի իրականացրած պետրոգրաֆիկ անալիզների հետազոտության արդյունքների:

9 Talcott 1935, 476–523; Corbett 1955, pl. 5–7; Егорова 2015, 64.

10 Corbett 1955, 172–186; Chechulina 2016, 58.

11 Блаватский 1953, 25–26, 241.

Իբրև դասական սևալաք անոթների տեղական նմանակումներ՝ սև, հայելափայլ անոթներն Այսրկովկասում մեծ թափով տարածվում են մ. թ. ա. 2–1-ին դդ. և լիովին վերանում մեր թվականության առաջին դարերում[12]: Վրաստանում դրանց ի հայտ գալը Գ. Նարիմանիշվիլին կապում է հայոց Արտաշես I (մ. թ. ա. 180 թ.) արքայի նվաճողական քաղաքականության հետ[13]: Յ. Գագոշիձեն, նրա հետևությամբ և Գ. Նարիմանիշվիլին կարծում են, որ սևափայլ խեցեղենն ունի փոյուգիական ծագում, որ միգրացիոն գործընթացների հետևանքով հասել է Վրաստան[14]: Սակայն Վրաստանի անտիկ հուշարձաններում մեր խնդրո առարկա դրոշմազարդ անոթների ոչ մի բեկոր դեռևս չի հայտնաբերվել[15]: Հելլենիստական դարաշրջանի մուգ խեցիով, սևափայլ խեցեղեն հանդիպում է նաև Բոսֆորի հունական և տեղական բնակավայրերում: Ի. Բոռաշինսկին դրանք համարում է ներմուծված և միջազգային առևտրի առարկա[16]:

Տիգրանակերտյան օրինակներին նման, սևափայլ, ներսից ողկուզակիր, ամբողջական գավաթներ հայտնաբերվել են Տիգրանակերտից մոտ 40 կմ արևելք գտնվող, ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Աղջաբեդիի շրջանի (պատմական Ուտիքի) մ.թ.ա. 6–1-ին դդ. թվագրվող Գարաքոբար բնակավայրի դամբարանադաշտի պեղումներով[17]: Թեև ձևաբանական և պատկերագրական նկարագրությամբ դրանք նույնական են տիգրանակերտյան օրինակներին, այնուամենայնիվ գավաթների լուսանկարների և գրչանկարների բացակայությունը դժվարացնում է դրանց համեմատությունը մեր նյութերի հետ: Ըստ Ֆ. Օսմանովի՝ նման ձևավորմամբ դրոշմազարդ գավաթներ հաճախ են հանդիպում Աղջաբեդիում, ինչպես նաև Միլ-Ղարաբաղյան տափաստանի անտիկ այլ բնակավայրերում: Ցավոք, հետազոտողը չի նշում, թե կոնկրետ որ հուշարձանները նկատի ունի: Կապ տեսնելով հյուսիսմերձսևծովյան հունական կենտրոնների, ի մասնավորի Նիմֆեի խեցեղենի և վերոհիշյալ գավաթների միջև՝ վերջինս Աղջաբեդիի ողկուզակիր գավաթները թվագրում է մ.թ.ա. 5-րդ դ. կեսերով կամ վերջով[18]:

Հաշվի առնելով, որ Աղջաբեդիի շրջանի Գարաքոբար հուշարձանի պեղումներով հայտնաբերված խեցեղեն նյութերում կան տիգրանակերտյան անտիկ խեցեղենի հետ նույնական օրինակներ (հարուստ գեղարվեստական հարդարանք ունեցող գունազարդ ծորակավոր և կաթսայատիպ անոթներ, հորիզոնական գծերով հարդարված թասերի մի քանի տիպեր և այլն), և, համաձայն չլինելով Ֆ. Օսմանովի թվագրմանը, Աղջաբեդիի վերոհիշյալ սևափայլ գավաթները համարում ենք Տիգրանակերտի արտադրանք և առևտրամշակութային ազդեցության արդյունք:

---

12 Гагошидзе 1979, 121; Нариманишвили 1991, 9, 86–87.

13 Нариманишвили 1991, 86–87.

14 Гагошидзе 1979, 121; Нариманишвили 1991, 86–87.

15 Ըստ Յ. Գագոշիձեի բանավոր հաղորդման (ապրիլ 2018):

16 Брашинский 1980, 71–73

17 Османов 2006, 69–75.

18 Османов 2006, 69–75.

Եղևնազարդ անոթներ

Տիգրանակերտի դրոշմազարդ անոթների հաջորդ խումբը բաց կարմրավարդագույնից օքրայի երանգ ունեցող անոթների բեկորներն են: Այս խմբի առաջին օրինակը դեղնադարչնագույն, անփայլ, քիչ ավազախառն խեցիով բաց անոթի հատակ է: Այն կազմված է միևնույն պեղավայրից տարբեր տարիներին հայտնաբերված երկու բեկորից (Տիգր. 2015, ՀսՊ/10 և Տիգր. 2017, ՀսՊ/27) [աղ. 2, նկ. 5]: Դրանց վրա՝ հատակի կենտրոնում, հատակամերձ հատվածում, սեղմումով արված համակենտրոն օղակներից մեծին դրոշմված է երեք ծառ կամ տերև: Ծառի պատկերն իրականացված է օվալի մեջ ներգծված ուղիղ առանցքի երկու կողմում արված շեղ գծերով:

Մեկ այլ՝ եղևնազարդ դրոշմով խեցատ հայտնաբերվել է անտիկ առաջին թաղամասից (Տիգր. 2014, ԱԹ/48): Այն թրծումից բաց կարմրավարդագույն դարձած, ավազի և կրի մանր մասնիկներով հարուստ, լավ հունցած և հավասարաչափ թրծած խեցիով փակ անոթի պսակի բեկոր է: Վզից դեպի իրան անցումը ձևավորված է ռիթմիկ կրկնվող սեպերից բաղկացած փորագրազարդ գոտուց, որից ներքև պահպանվել է ճյուղերը դեպի ցած ուղղած ծառի կամ տերևի օվալաձև դրոշմը [աղ. 2, նկ. 6]: Անոթների արտաքին մակերեսին և հատկապես պսակի վրա դրոշմազարդ նման օրինակներ հայտնի են Հյուսիսային Միջագետքից՝ Նիմրուդի ուշ հելլենիստական շերտերից հայտնաբերված և մ.թ.ա. 2-րդ դ. թվագրվող նյութերի մեջ: Մասնավորապես կարելի է առանձնացնել երեք ոլորուն կանթերով մեծ կճուճը (բարձրությունը՝ 56,5 սմ, թվագրվում է մ.թ.ա. 145–140 թթ.), որի շուրթը ձևավորված է վերադիր ալիքաձև զարդով, պսակը՝ դրոշմազարդ օղակներից բաղկացած հորիզոնական երեք շարքերով և փորագրազարդ ուռուցիկ գոտիով [աղ. 3, նկ. 4]: Ուռուցիկ գոտուց ներքև՝ անոթի պսակի և իրանի միացման հատվածում, դրված է խնդրո առարկա ծառի կամ տերևի պատկերներից կազմված, հորիզոնական դրոշմված եղևնազարդ գոտի[19]: Տիգրանակերտյան օրինակի նման ռիթմիկ կրկնվող սեպերից բաղկացած փորագրազարդ գոտիով է ձևավորված նաև Նիմրուդի՝ ուշ հելլենիստական շերտից հայտնաբերված, լավորակ խեցուց պատրաստված, շուրթը վարդագույն ներկով գունազարդած թասը (շուրթի տրամագիծը՝ 27,2 սմ) [աղ. 3, նկ. 7][20]:

Դրոշմազարդ խեցեղենի օրինակներ առատորեն հայտնաբերվել են Բակտրիայի Ժիգա-թեփե հուշարձանի 3–4-րդ հորիզոններից, որոնք համապատասխանաբար թվագրվում են մ.թ. 3–4-րդ դդ.[21]: Ժիգա-թեփեի նմուշները ևս փակ անոթների վրա դրսից դաջված խեցատներ են [աղ. 3, նկ. 2]: Դրանք կազմված են անոթը գոտևորող հորիզոնական գոտիներից, հիմնականում առանց որոշակի սահմանների և տարբեր նախշերի համադրություններով (տերև/ծառ, վարդյակ, եռաճյուղ զարդամոտիվ) ստեղծում են տարբերակների բազմազա-

[19] Oates D., Oates J. 1957, pl. XXVII/4; Mallowan 1966, 307, pic. 296.

[20] Mallowan 1966, 306, pic. 295.

[21] Пугаченкова 1979, 85–87, рис. 22, 23.

նություն: Հիմնականում դրոշմվում էին սափորների ուսերը կամ իրանի լայն հատվածը: Առաջին մոտիվը՝ ծառը, որն ամենատարածվածն է, երբեմն մեկնաբանվում է իբրև հասկ, սակայն Գ. Պուգաչենկովան այն մեկնաբանում է իբրև հունաբակտրիական արմավազարդ և նշում, որ Բակտրիայում դրոշմազարդ խեցեղենը լայն կիրառություն է ստանում հատկապես քուշանա-սասանյան ժամանակաշրջանի անոթների վրա[22]:

Տիգրանակերտյան օրինակին շատ նման՝ օվալի մեջ ներգծված ծառի կամ տերևի պատկերով չորս դրոշմներով բուլլա է հայտնաբերվել պարթևների հին մայրաքաղաք Հեկատոմպիլի (Քումիս, Իրան) պեղումներով [աղ. 3, նկ. 3]: Ա. Բիվարն այն թվագրում է մ. թ. ա. 3-րդ – մ.թ. 1-ին դդ.[23]: Ուշ հռոմեական ժամանակաշրջանով (3–4-րդ դդ.) թվագրվող, երեք սրածայր տերևներով դրոշմազարդ բաց անոթների բեկորներ են հայտնի Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում գտնվող պատմական Կարիայի Լամբրանդա բնակավայրից[24]:

Ինչպես նշեցինք վերևում, դրոշմված արմավազարդը դասական հունահռոմեական աշխարհում նախընտրելի և սիրված մոտիվներից էր[25]: Արցախի Տիգրանակերտում հայտնաբերված ծառի կամ տերևի պատկերով անոթները պատկերագրորեն ավելի մոտ են ուշ հելլենիստական կամ պարթևական խեցեղենին և, ամենայն հավանականությամբ, դրանց տեղական նմանակումն են:

Ընդ որում, Տիգրանակերտի անտիկ շրջանի բազմաքանակ գունազարդ խեցեղենի քննությունը ցույց է տալիս, որ բուսական պատկերները բացառապես սրածայր տերևներով ճյուղանման զարդամոտիվներով են: Ի լրումն վերը նշված օրինակների՝ 2013 թ. անտիկ առաջին քաղաքային թաղամասում պեղված կաթսայատիպ անոթի[26], 2018 թ. արևելյան դամբանադաշտում պեղված կարասային թաղման անոթ հանդիսացող կարասներից մեկի վրայի կենաց ծառերը ևս պատկերված են սփռված փարթամ եղևնազարդ ճյուղերով[27]: Ուղիղ առանցքի երկու կողմում շեղ գծերով տրված այս եղևնազարդը պատկերագրությամբ հիշեցնում է Տիգրան II արծաթե և պղնձե դրամների դարձերեսին պատկերված անտիոքյան Տիխե աստվածուհու ձեռքի արմավենու ճյուղը:

Ինչպես հայտնի է, տարատեսակ դրոշմներով հարդարված խեցեղենը Հայկական լեռնաշխարհում լայն տարածում է ունեցել դեռևս ուրարտական ժամանակաշրջանում: Խոսելով ուրարտական սպասքի վրա առկա կնքադրոշմների մասին՝ Ֆ. Տեր-Մարտիրոսովը կարծիք է հայտնել, որ դրանք կարող էին լինել ոչ թե վարպետի նշաններ, այլ ուրարտական դիցարանի աստվածությունների խորհրդանիշներ[28]: Անտիկ շրջանում դրոշմվում էին հատկապես առևտրա-

22 Пугаченкова 1979, 85.

23 Bivar 1982, 161–176, fig. 6/ E4.

24 Hellstrom 1965, 43–45, 75–76, pl. 18/ 365, 368.

25 Corbett 1955, 172–186; Chechulina 2016, 58.

26 Գաբրիելյան 2019, 133–134.

27 Petrosyan et al. 2021, 299, fig. 15.

28 Ter-Martirosov 2009, 127–145.

յին տարա հանդիսացող անոթների բռնակները: Հոոդոսի (մ.թ.ա. 2–1-ին դդ.), Կոսի (մ.թ.ա. 1-ին - մ.թ. 1-ին դդ.), Պոնտական Հերակլեայի (մ.թ. 1–2-րդ դդ.) և ուշ աթենական (մ.թ. 3–4-րդ դդ.) արտադրանք հանդիսացող ներմուծված ամֆորաների մի քանի տասնյակ օրինակներ, որոնց շարքում կան նաև դրոշմազարդ բռնակներով նմուշներ, հայտնի են Արտաշատի պեղումներից և վերգետնյա նյութերից[29]: Արտաշատի №13 դամբարանից հայտնաբերված անփայլ մակերեսով գունազարդ կճուճի ուսին դրոշմված է պայտաձև զարդերից կազմված զարդագոտի [աղ. 3, նկ. 1][30]: Ուղղանկյուն կնիքով արված շան պատկերով դրոշմազարդ մեկ բռնակ հայտնաբերվել է Ավանի անտիկ հնավայրից (մ. թ. ա. 2-րդ – մ.թ. 1-ին դդ.)[31]: Վերադիր դրոշմազարդ գոտիներով հարդարված կարասներ պեղվել են Արմավիրի մարզում գտնվող Երվանդաշատի՝ անտիկ դարաշրջանով թվագրվող կարասային սրահում [աղ. 3, նկ. 5][32]: Այս համատեքստում էլ ավելի են կարևորվում Տիգրանակերտի դրոշմազարդ խեցեղենի օրինակները:

Եզրահանգումներ

Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեգործության մեջ թեև փոքրաքանակ, բայց տարատեսակ խումբ են կազմում դրոշմազարդման եղանակով հարդարված անոթները, որոնց մեջ առանձնանում են սև հայելափայլ արտաքինով, ներքուստ ողկուզակիր գոտիներով հարդարված գավաթների, փիալա-ըմպանակի և թասի բեկորները:

Տիգրանակերտյան սևափայլ ողկուզակիր անոթները, ըստ էության, դասական սևալաք խեցեղենի տեղական նմանակումներն են: Սակայն զարդամոտիվը տեղական է. ողկուզակիր պատկերներ տարածաշրջանի այլ հուշարձաններից հայտնի չեն:

Ողկույզներով դրոշմվել են բացառապես բաց անոթները, որոնք նախատեսված են եղել հեղուկ/գինի ըմպելու համար: Այս անոթների ողջ հորինվածքի նրբագեղ կատարումը, սև թանձր քսուքապատումը և փայլեցումը դրանց տալիս են յուրահատուկ գեղեցկություն: Կարելի է ենթադրել, որ, ըստ էության, գործ ունենք հատուկ, գուցե՝ ծիսական նպատակով օգտագործվող անոթների մի խմբի հետ:

Բաց կարմրավարդագույն խեցատների վրա դրոշմված կենաց ծառի/տերևի պատկերը զուգահեռներ ունի հատկապես Հյուսիսային Միջագետքի և Միջին Ասիայի պարթևական շրջանի խեցեղեն նյութերում: Տիգրանակերտյան օրինակներն, ամենայն հավանականությամբ, կարող են ուշ հելլենիստական կամ պարթևական խեցեղենի տեղական նմանակումը լինել:

Վերոհիշյալ դրոշմազարդ խեցեղենի օրինակները լրացնում են Հայաստանի անտիկ հուշարձաններից (Արտաշատ, Ավան, Երվանդաշատ) ցայսօր հայտնի դրոշմազարդ խեցեղենի սակավաթիվ նմուշների շարքը և լույս սփռում Արցախի Տիգրանակերտի մշակութային նորամուծությունների, առևտրա-մշա-

29 Зардарян 1977, 270–271.

30 Խաչատրյան 1981, 129.

31 Демирханян 2010, 18, табл. 26/2, 63/1.

32 Գաբրիելյան 2015, 119–120, նկ. 11–12:

կութային կապերի և տարածաշրջանում նրա խաղացած մշակութային դերակատարմանն առնչվող հարցերի վրա:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԹ – Անտիկ թաղամաս
ՀսՊ – Հյուսիսային պարիսպ
ՄԲ – Միջնաբերդ
Տիգր. – Տիգրանակերտի պեղումներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ 2015
Գաբրիելյան Ա., Երվանդաշատի պալատական համալիրի կարասային սրահը (Նախնական հաղորդում) // «Անտառ ծնունդց» հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, խմբագրական կազմ՝ Է. Մինասյան, Հ. Պետրոսյան և այլք, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 117–131:

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ 2019
Գաբրիելյան Ա., Արցախի Տիգրանակերտի կաթսայատիպ անոթները, համահայկական հանդես ՎԷՄ, Երևան, 2019, թիվ 1 (65), 128–138:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 1981
Խաչատրյան Ժ., Արտաշատ II, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:

ՊԵՏՐՈՍՅԱՆ և այլք 2015
Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Գաբրիելյան Ա., Վարդանեսովա Տ., Հովսեփյան Ռ., Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները // Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011–2012 թթ., Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2015, 73–108:

БЛАВАТСКИЙ 1953
Блаватский В., История античной расписной керамики, Москва, изд. Московского Университета, 1953.

БРАШИНСКИЙ 1980
Брашинский И., Греческий импорт на Нижнем Дону, Ленинград, «Наука», 1980.

ГАГОШИДЗЕ 1979
Гагошидзе Ю., Самадло (археологические раскопки), Тбилиси, «Мецниереба», 1979.

ДЕМИРХАНЯН 2010
Демирханян А., Северо-восток Еревана в эпоху Арташесидов (II в. до н. э – I в. н. э), Ереван, «Гитутюн», 2010.

ЕГОРОВА 2015
Егорова Т., Чернолаковая керамика V–IV вв. до н.э. с прочерченным и штампованным орнаментом из раскопок Пантикапея // С Митридата дует ветер”: Боспор и Причерноморье в античности. К 70-летию В.П. Толстикова, ред. коллегия: Д. Журавлев, О. Габелко, Университет Дмитрия Пожарского, Русский Фонд Содействия Образованию и Науке, Москва, 2015, 63–67.

ЗАРДАРЯН 1977
Зардарян М., Амфоры из раскопок Арташата // Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1977, №1, 270–271.

НАРИМАНИШВИЛИ 1991
Нариманишвили Г., Керамика Картли V-I вв. до н.э., Тбилиси, «Мецниереба», 1991.

ОСМАНОВ 2006
Османов Ф., История и культура Кавказской Албании, IV в. до н. э. – III в. н.э. (на основании археологических материалах), Баку, «Тахсил», 2006.

ПУГАЧЕНКОВА 1979
Пугаченкова Г., Жига-Тепе (Раскопки 1974 г.) // Древняя Бактрия, вып. 2, Материалы Советско-Афганской археологической экспедиции, Москва, «Наука», 1979, 63–94.

BIVAR 1982
Bivar A, Seal impressions of Parthian Qumis // Iran, 1982, 20, 161–176.

CORBETT 1955
Corbett P., Palmette stamp from an Attik B.Glaz // «Hesperia», vol. 24, 172–186.

CHECHULINA 2016
Chechulina I., Attic black-glazed stamped ware from Olbia // Ukrainian Archaeology, Kiev, 2016, № 2, 58–65.

GABRIELYAN 2018
Gabrielyan A., Stamped Pottery from Tigranakert in Artsakh // Aramazd, vol. XII ISSUE 2 2018, Association for Near Eastern and Caucasian Studies, Yerevan, Oxford, 2018, 172–181.

HELLSTROM 1965
Hellstrom P., Labraunda // Swedish Excavations and Researches, Pottery of Classical and Later Date, Terracotta lamps and glass, C.W.K. Gleerup, Lund, 1965, vol. II, part 1, 90 p.

MALLOWAN 1966
Mallowan M., Nimrud and its Remains, London, Collins on behalf of The British School of Archaeology in Iraq, 1966, vol. I.

MOSER, TILHARD 1987
Moser F., Tilhard J.-L., Un nouvel atelier de sigillée en Aquitaine, Une revue inter-régionale d'archéologie, AQVITANIA, Tomes 5, 1987, Editions de la federation AQVITANIA, 35–121.

OATES D., OATES J. 1957
Oates D., Oates J., Nimrud 1957: The Hellenistic Settlement // Iraq, 1957, vol. 20, No. 2 (Autumn, 1958), 114–157.

PETROSYAN et al. 2021
Petrosyan H., Safaryan V., Karapetyan I., Kirakosyan L., Vardanyan R., Vardanesova T., Gabrielyan A., Pithos Burials of Tirganakert of Artsakh // Archaeology of Armenia in regional context II, International Conference dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography, Yerevan, 2021, 293–304.

TALCOTT 1935
Talcott L., Attic Black-Glazed Stamped Ware and Other Pottery from a Fifth Century Well // «Hesperia», 1935, vol. 4.3, 476–523.

TER-MARTIROSOV 2009
Ter-Martirosov F., Stamps and Images on the Ceramics of the Urartian Period from Erebuni // «Aramazd», 2009, vol. IV, Issue 2, 127–145.

VERNHET 1998
Vernhet A., La Graufesenque. Céramique gallo-romaines, Millau, Éditions du Beffroi, 1998.

Armine A. Gabrielyan
Institute of Archaeology and Ethnography
Yerevan State University

STAMPED POTTERY OF THE CLASSICAL PERIOD FROM TIGRANAKERT IN ARTSAKH

Keywords: Tigranakert of Artsakh, Classical period, stamped pottery, grape clusters, winemaking, Tree of Life.

The stamped pottery is of a great significance for the research of the material and spiritual culture of the Classical period (I century BC - III century AD) of Tigranakert of Artsakh (the former Nagorno-Karabakh Autonomous region). The ceramic assemblage includes vessels of different forms and styles, as well as elaborately decorated, black and grey polished, stamped and incised examples. The examples, decorated with stamped ornamentation make a small, but diverse group in this collection.

Distinctive examples of the stamped pottery discovered during the excavations of Tigranakert at different field seasons are black, polished goblets, phialas and fragments of bowls, decorated with stamped images of grape clusters.

The elegant execution of the design of the polished black cluster-bearing vessels, with a dense black slip and surface polishing leave an impression of lacquering. All these characteristics allow suggesting that they were used for a particular purpose.

The next group of the stamped pottery of Tigranakert is presented by potsherds with surface color that varies from light reddish-pink to ochre. They bear stamped decorations of a tree or a leaf in different positions.

Pottery with different stamped decorations had been widespread in the Armenian highlands since the Urartian period. Only a few examples of stamped pottery are known from sites of the Classical period in Armenia (Artashat, Avan, Yervandashat). In this context, the stamped pottery of Tigranakert is of a great importance. It reveals essential evidence regarding the trade and cultural connections, cultural innovations, and the cultural role Tigranakert played in the region in the Classical period.

Армине Араратовна Габриэлян
Институт археологии и этнографии
Ереванский государственный университет

АНТИЧНАЯ ШТАМПОВАННАЯ КЕРАМИКА АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

Ключевые слова: Арцахский Тигранакерт, античный период, штампованная керамика, гроздь, виноделие, Древо Жизни.

Для изучения материальной и духовной культуры Арцахского Тигранакерта античного периода (I в. до н.э. - III в. н.э.) большое источниковедческое значение имеет посуда. Керамический ассортимент включает не только сосуды различных форм, но и богато орнаментированные, черные и серые лощеные, штампованные образцы и также сосуды с резной орнаментацией. В этом

ряду небольшую, но разнообразную группу составляет посуда, украшенная штампованным методом.

Исключительными примерами штампованной керамики являются выявленные благодаря раскопкам Тигранакерта в различные годы черные, лощеные до зеркального блеска кубки, чаши-пиалы и фрагменты мисок, с внутренней стороны украшенные штампованными изображениями гроздей винограда.

Изящное исполнение всей композиции чернолощеных сосудов, украшенных изображениями гроздей винограда, черная густая обмазка, лощение, которое оставляет впечатление черной лакировки, придают этим сосудам особую красоту и позволяют предположить, что они использовались в особых целях.

Следующую группу сосудов Тигранакерта со штампованным орнаментом составляют фрагменты с оттенками от светло-красно-розового до охристого. На них представлены изображения дерева или листьев, имеющих различное расположение.

Керамика, украшенная различным штампованным орнаментом, была широко распространена на территории Армянского нагорья еще в эпоху Урарту. Только единичные фрагменты штампованной керамики были выявлены при раскопках античных памятников Армении (Арташат, Аван, Ервандашат). В этом контексте ещё более важное значение приобретают образцы штампованной керамики из Тигранакерта, которые могут пролить свет на торгово-культурные связи Тигранакерта в античную эпоху, культурные нововведения и на культурную роль Тигранакерта в регионе.

Ներկայացվել է՝ 01.02.2022,
գրախոսվել է՝ 20.03.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:

Աղյուսակ 1. ***Նկ. 1-2.*** *Ողկուզակիր գավաթ և թաս Տիգրանակերտից (գրչանկարները՝ Հայկ Կյուրեղյանի)։* ***Նկ. 3-12.*** *Տիգրանակերտի ողկուզակիր անոթների բեկորներ (լուսանկարները՝ հեղինակի)*



Աղյուսակ 2. ***Նկ. 1.*** *Ֆրանսիայի անտիկ հուշարձաններից հայտնաբերված խեցեղենի դրոշմիչ (տե՛ս Moser, Tilhard 1987, fig. 49):* ***Նկ. 2.*** *Ֆրանսիայի անտիկ հուշարձաններից հայտնաբերված խեցեղենի դրոշմիչներ (տե՛ս Vernhet 1998, p. 23):* ***Նկ. 3.*** *Տիգրանակերտյան ողկուզակիր անոթների դրոշմիչ (վերակազմությունը՝ հեղինակի):* ***Նկ. 4.*** *Անտիկ առաջին թաղամասից հայտնաբերված դիորիտե կոկիչ (լուսանկարը՝ հեղինակի):*
Նկ. 5. *Հյուսիսային պարսպից գտնված դրոշմազարդ թաս (գրչանկարը՝ Անի Սահակյանի, լուսանկարը՝ հեղինակի):* ***Նկ. 6.*** *Անտիկ առաջին թաղամասից հայտնաբերված փակ անոթի դրոշմազարդ բեկոր (լուսանկարը՝ հեղինակի)*

Աղյուսակ 3. ***Նկ. 1.*** *Արտաշատից հայտնաբերված դրոշմազարդ սափորի պսակ (տես Խաչատրյան 1981, նկ. 7/4):* ***Նկ. 2.*** *Դրոշմազարդ անոթի բեկոր Ժիգա-թեփեից (մ.թ. 3-4-րդ դդ., տես Пугаченкова 1979, рис. 22/19):* ***Նկ. 3.*** *Բուլլա Հեկատոմպիլից (տես Bivar 1982, fig.6/ E4):* ***Նկ. 4.*** *Նիմրուդից հայտնաբերված կճուճ (մ.թ.ա. 2-րդ դ., տես Mallowan 1966, pic. 296):* ***Նկ. 5.*** *Դրոշմազարդ կարաս Երվանդաշատից. դրվագ (տես Գաբրիելյան 2015, նկ. 11):* ***Նկ. 6.*** *Դրոշմազարդ ափսեի բեկոր Լաբրանդայից (տես Hellstrom 1965, pl. 18/ 368):* ***Նկ. 7.*** *Նիմրուդից հայտնաբերված թաս (մ.թ.ա. 2-րդ դ., տես Mallowan 1966, pic. 295)*

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5